Արձանագրության 3

Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի եզրաքարերի վերանորոգման և ջրագծի հիմնանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/35» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

06.11.2017թ.
ժամը՝ 10:40

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝	Թ. Երկանյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝	Ա. Հովակիմյան /գնահատող/, Բ. Թերզյան /գնահատող/ Ա. Ջալալյան /բացող/, Գ. Հակոբյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Համբարձումյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

(Թ. Երկանյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունեն հարկային պարտավորություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. Բաց մրցույթի ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Թ. Երկանյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել բաց մրցույթի ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«ԷՅ ՎԻ ԷՆ Գրուպ» ՍՊԸ	Բավարար
«ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/35» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակիցների և պայմանագիր կնքելու առաջարկի մասին

(Թ. Երկանյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-17/35» ծածկագրով բաց մրցույթի ընտրված մասնակիցներ հայտարարել.

- 1-ին չափաբաժնի մասով «ԷՅ ՎԻ ԷՆ Գրուպ» ՍՊԸ-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով «ԳԼՈԲԱԼ ԻՆԺԵՆԵՐ» ՍՊԸ-ին և վերջիններս ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ տասն օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Թ. Երկանյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 10:30-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Թ. Երկանյան

Անդամներ՝ ---------- Ա. Հովակիմյան

---------- Բ. Թերզյան

---------- Ա. Ջալալյան

---------- Գ. Հակոբյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան